

<<ԿՐԵԴԻՏԻՆԱՆՍ>> ՈՒՎԿ ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

2018թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ



ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԿՐԵԴԻՏ ՖԻՆԱՆՍ >> ՈՒՎԿ ՓԲԸ-ի բաժնետերերին

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է «Կրեդիտֆինանս» ՈՒՎԿ Փակ Բաժնետիրական Ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՍՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ <<Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար>> բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ԼԵՐԳՐԱՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՌԻԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, տարածք 54, Հեռ.՝ +37411-577-544,
Էլ. հասցե՝ auditservicellc@gmail.com, www.pkfarmeria.com

լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՌԻԴԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն , որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրնաց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք պլաննազիտական դատողություն և պահպանում ենք մասնազիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների

հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հնկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հնկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 07.05.2019թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՌԻԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Տնօրեն՝



Գործ Դավթյան

Որակավորված աուդիտոր

Գայանե Թովմասյան

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՌԻԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, տարածք 54, Հեռ.՝ +37411-577-544,

Էլ. հասցե՝ auditservicellc@gmail.com, www.pkfarmeria.com

<<ԿԵՆՏՐՈՆ ՖԻՆԱՆՍ>> ՈՒՎԿ ՓԲԸ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծան.	(հազար դրամ)	
		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	198 065	158 141
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	4	(158 790)	(109 134)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		39 275	49 007
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	5	190 641	179 665
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	6	-	-
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		190 641	179 665
Արտարժույթային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)	7		
Ակտիվների հնարավոր կորուստներից զուտ շահույթ/վնաս	8	(86 044)	(46 061)
Այլ գործառնական եկամուտներ	9	9 200	9 558
Գործառնական եկամուտներ		153 072	192 169
Ընդհանուր վարչական ծախսեր	10	(171 770)	(151 444)
Այլ ծախսեր		(2 430)	(1 520)
Շահույթը (վնասը) մինչև հարկումը		(21 128)	39 205
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)			(8 144)
Շահույթը (վնասը) հարկումից հետո		(21 128)	31 061
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերազնահատումներ			
Դրամական հոսքերի հեջավորում			
Ոչ ընթացիկ ակտիվների վերազնահատումներից օգուտներ			
Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ			
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք այլ ծախսից հետո			
Համապարփակ ֆինանսական արդյունք		(21 128)	31 061

Սույն ֆինանսական հաշվետվությունները ընդունվել և հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 19.02.2019թ.

<<ԿԵՆՏՐՈՆ ՖԻՆԱՆՍ>> ՈՒՎԿ ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝

Բելլա Գաբրիելյան

Գլխավոր հաշվապահ՝

Վարդանուշ Մինասյան

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՌԴԴՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ
տնօրեն՝



<< ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ >> ՈՒՎԿ ՓԲԸ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

ԱՆՎԱՐՈՒՄԸ	Ծան.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ բանկերում	11	17 836	19 172
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		956	984
Հաճախորդներին տրված ամորտիզացվող արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	12	830 617	873 317
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	13		
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	14	12 756	13 687
Հաշվեգրված տոկոսներ	15	14 011	10 131
Հետաձգված հարկային ակտիվներ		7 686	
Այլ ակտիվներ	16	36 067	32 149
Ընդամենը ակտիվներ		919 929	949 440
Պարտավորություններ			
Պարտավորություններ Ընկերությունների և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	40 000	14 500
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ	18	8 210	2 067
Ներգրավված ժամկետային փոխառություններ	19	654 000	639 000
Վճարվելիք տոկոսներ	20	35 712	34 435
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Պահուստներ		2 101	2 101
Այլ պարտավորություններ	21	6 725	5 809
Ընդամենը պարտավորություններ		746 748	697 912
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	22	244 020	244 020
Էմիսիոն եկամուտ		(25 196)	(25,196)
Պահուստներ այդ թվում		3 196	1 643
Գլխավոր պահուստ		3 196	1 643
Վերագնահատման պահուստներ		-	-
Զբաղիված շահույթ (վնաս)		(48 839)	31 061
Ընդամենը կապիտալ		173 181	251 528
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		919 929	949 440

<<ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ>> ՈՒՎԿ ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝


Բելլա Գաբրիելյան

Գլխավոր հաշվապահ՝

Վարդանուշ Մինասյան

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՌԻԴՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ
տնօրեն՝

Գոռ Դավթյան



<<ԿՐԵԴԻՏ ԲԱՆԿ» ՓԲԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ	Հետ գնված կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	ՖՀՄՍ 9-ի հետ կապված արժեզրկում	Զբաղիված շահույթ	Ընդամենը կապիտալ
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2016թ.	244 020	(48 804)	(25 196)	1 643		29 955	201 618
Վերահաշվարկված մնացորդ	244 020		(25 196)	1 643			220 487
Համապարփակ եկամուտ						31 061	31 061
Շահութաբաժիններ							
Ներքին շարժեր, այդ թվում՝							
Մասհանումներ գլխավոր պահուստին							
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.	244 020		(25 196)	1 643		31 061	251 528
ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցություն					(27 711)		(27 711)
Վերահաշվարկված մնացորդ	244 020		(25 196)	1 643	(27 711)	31 061	223 817
Համապարփակ եկամուտ					(10 850)	(10 278)	(21 128)
Շահութաբաժիններ						(29 508)	(29 508)
Ներքին շարժեր, այդ թվում՝				1 553		(1 553)	
Մասհանումներ գլխավոր պահուստին				1 553		(1 553)	
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	244 020		(25 196)	3 196	(38 561)	(10 278)	173 782

<<ԿՐԵԴԻՏ ԲԱՆԿ» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ՝

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՌԻԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

տնօրեն՝

Բելլա Գաբրիելյան

Վարդանուշ Մինասյան

Գրո Դավթյան



<<ԿՐԵԴԻՏ ԲՆԱՆՍ>> ՈՒՎԿ ՓԲԸ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	30 945	91 105
Ստացված տոկոսներ	329 417	271 246
Վճարված տոկոսներ	(140 927)	(67 453)
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ		
Ստացված շահաբաժիններ		
Կորուստների վերականգնում		
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(145 968)	(77 140)
Վճարված հարկեր	(40 417)	(50 949)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	28 840	15 401
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	(39 587)	(60 309)
Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)		
Շահույթով կամ վնասով չափվող իրական արժեքով հաշվառվող և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)		
Ներգրավված վարկերի և փոխառությունների (նվազում)ավելացում	15 000	275 500
Տրամադրված վարկերի ավելացում(նվազում)	(54 587)	(335 809)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից		
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	(8 642)	30 796
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)		
Ընկերություններում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(3 263)	(3 898)
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	(3 263)	(3 898)
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Վճարված շահաբաժիններ	(29 508)	(29 945)
Բանկերից ստացված վարկերի ավելացում/նվազում	40 000	14 500
Ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	10 492	(15 445)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(1 413)	11 454
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	19 283	7 829
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	17 870	19 283

<<ԿՐԵԴԻՏ ԲՆԱՆՍ>> ՈՒՎԿ ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝

Բեյլա Գաբրիելյան

Գլխավոր հաշվապահ՝

Վարդանուշ Մինասյան

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ
տնօրեն՝

Գրոր Դավթյան



Ծանոթագրություն 1. <<Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում>>

1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» ՈՒՆԻՎԵՐՍԱԿԱՆ ԿԱԶՄԱՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (Ընկերություն) հիմնադրվել է հիմնադիրների 2012թ-ի նոյեմբերի 27 հիմնադիր ժողովի որոշմամբ: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմված է մասնակիցների կողմից ձեռք բերված բաժնետոմսերի անվանական արժեքից: Ընկերությունն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական միջոցները, ստանալ վարկեր և փոխառություններ, իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր, լինել գրավառու և գրավատու, վճարովի ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի ու քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից:

Ընկերության իրավաբանական հասցեն է ՀՀ ք.Երևան, Կիևյան 2-րդ նրբանցք, տուն 16:

Ընկերության աշխատակիցների ցուցակային թվաքանակը ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմում է 36մարդ:

2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱՍՏԱՆԱԶԻՄՈՒՄՆԵՐԸ

2.1 ՀԱՄԱՊԱՏԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից մշակված և հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Ներկայացման Միջազգային Ստանդարտների (ՀՀՄՄՍ) և Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի (ՀՀՄՄԿ) կողմից թողարկված Մեկնաբանությունների համաձայն: Համեմատական տեղեկատվությունը և ֆինանսական հաշվետվությունները ներառում են Ընկերության ֆինանսական գործունեության արդյունքները և դրամական հոսքերը 31.12.2018թ. ավարտված տարվա համար:

2.2 ԶԱՓՄԱՆ ՀԻՄՈՒՄՆԵՐԸ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.3 ՖՈՐԿՅՈՒՆԱԼ և ՆԵՐԿԱՑԱՑՄԱՆ ԱՐԺՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է, որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Այս՝ ֆինանսական հաշվետվությունները ՀՀՄՄ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2018թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

ՀՀՄՄ 12 (Փոփոխություններ) «Շահութահարկեր»

ՀՀՄՄԽ-ը թողարկել է «Չիրացված վնասների համար հետաձգված հարկային ակտիվների ճանաչում» պարզաբանումը, որը ՀՀՄՄ 12-ում՝ «Շահութահարկեր», կատարում է որոշակի փոփոխություններ: Փոփոխությունները պարզաբանում են, թե ինչպես պետք է հաշվառել իրական արժեքով չափվող պարտքային գործիքներին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները, հատկապես այն դեպքերում, երբ շուկայական տոկոսադրույքի փոփոխությունները նվազեցնում են պարտքային գործիքի իրական արժեքը սկզբնական արժեքից ցածր մակարդակի:

Սույն փոփոխությունները պարզաբանում են հետևյալը.

այն պարտքային գործիքների գծով չիրացված վնասները, որոնք չափվում են իրական արժեքով, իսկ հարկային առումով՝ սկզբնական արժեքով, առաջացնում են նվազեցվող ժամանակավոր տարբերություններ՝ անկախ նրանից, թե պարտքային գործիքին տիրապետողն ակնկալում է վերականգնել դրա հաշվեկշռային արժեքը՝ այն վաճառելու, թե օգտագործելու միջոցով,

ակտիվի հաշվեկշռային արժեքը չի սահմանափակում հարկման ենթակա ապագա հավանական շահույթների գնահատումը,

հարկման ենթակա ապագա շահույթների գնահատումները չեն ներառում նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հակադարձումից առաջացող հարկային նվազեցումները,

Ընկերությունը պետք է հաշվի առնի, արդյոք հարկային օրենսդրությունն արգելում է հարկվող շահույթների այն աղբյուրները, որոնց առումով այն կարող է նվազեցումներ կատարել նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հակադարձման մասով: Եթե հարկային օրենսդրությունում չկան այդպիսի արգելքներ, Ընկերությունը գնահատում է նվազեցվող ժամանակավոր տարբերությունը բոլոր այլ նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հետ համատեղ:

Փոփոխությունները պետք է կիրառվեն հետընթաց: Այս փոփոխություններն էական ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՄ 9 «Ֆինանսական գործիքներ»

ՀՀՄՄԽ-ը թողարկել է ՖՀՄՄ 9-ը «Ֆինանսական գործիքներ»՝ ներկայացնելով իր ծրագրի ավարտը, ինչը պետք է փոխարինի ՀՀՄՄ 39-ին «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»: Նոր ստանդարտն ընդարձակ փոփոխություններ է ներկայացնում ՀՀՄՄ 39-ի ուղեցույցում ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վերաբերյալ և ներկայացնում է ֆինանսական ակտիվների արժեզրկման նոր «կանխատեսվող վարկային կորուստներ» մոդելը:

ՖՀՄՄ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր մոտեցում, որը արտացոլում է այդ ակտիվների կառավարման համար օգտագործվող բիզնես մոդելը և դրանց հետ կապված դրամական միջոցների հոսքերի առանձնահատկությունները: ՖՀՄՄ 9-ը ֆինանսական ակտիվների համար ներառում է երեք հիմնական դասակարգում՝

ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող:

Ընկերությունը, բաժնային գործիքների համար, որոնք չեն պահվում առևտրային նպատակներով, սկզբնական

ճանաչման պահին կարող է կատարել իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափելու պնդակադարձելի ընտրություն: Այս ընտրությունը յուրաքանչյուր ներդրման համար կատարվում է առանձին:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվները դասակարգվում են վերը նշված դասերից մեկում: ՖՀՄՄ 9-ի կիրառմամբ դադարեցվում են ՀՀՄՄ 39-ով սահմանվող մինչև մարման ժամկետը պահվող, վարկեր և դեբիտորական

պարտքեր, վաճառքի համար մատչելի և իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների դասակարգումները:

ՖՀՄՍ 9-ը անդրադառնում է 01 հունվարի 2018թ-ի դրությամբ պահվող ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա հետևյալ կերպ.

- Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և առևտրային նպատակով պահվող ածանցյալ գործիքները, որոնք պահվում էին ռիսկի կառավարման նպատակով և որոնք ՀՀՄՍ 39-ի համաձայն չափվում էին իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով, համաձայն ՖՀՄՍ 9-ի նույնպես չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- Ընկերություններին և հաճախորդներին տրված վարկերը, որոնք ՀՀՄՍ 39-ի համաձայն դասակարգված էին որպես վարկեր և դեբիտորական պարտքեր և չափվում էին ամորտիզացված արժեքով, համաձայն ՖՀՄՍ 9-ի ընդհանուր առմամբ նույնպես չափվում են ամորտիզացված արժեքով,
- Մինչև մարման ժամկետը պահվող պարտքային գործիքները (արժեթղթերը), որոնք ՀՀՄՍ 39-ի համաձայն չափվում էին ամորտիզացված արժեքով, համաձայն ՖՀՄՍ 9-ի ընդհանուր առմամբ նույնպես չափվում են ամորտիզացված արժեքով,
- ՀՀՄՍ 39-ի համաձայն վաճառքի համար մատչելի դասակարգված պարտքային գործիքները, համաձայն ՖՀՄՍ 9-ի չափվում են ամորտիզացված արժեքով, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով կամ իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով՝ կախված կոնկրետ հանգամանքներից,
- Բաժնային գործիքների մեծ մասը, որոնք համաձայն ՀՀՄՍ 39-ի դասակարգված էին որպես վաճառքի համար մատչելի, համաձայն ՖՀՄՍ 9-ի չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով:

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ դասակարգման և չափման գնահատումը ազդում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա այնպես, ինչպես 2018թ-ի հունվարի 1-ին, քանի որ ՖՀՄՍ 9-ը պահանջում է, որ բիզնես մոդելի գնահատումը կատարվի սկզբնական կիրառման օրվա դրությամբ գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների հիման վրա, որը Ընկերության համար հանդիսանում է 2018թ-ի հունվարի 1-ը:

ՖՀՄՍ 9-ը հիմնականում պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման համար ՀՀՄՍ 39-ի ներկա պահանջները: Այնուամենայնիվ, համաձայն ՀՀՄՍ 39-ի ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի բոլոր փոփոխությունները սահմանված իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով ճանաչվում էին շահույթ՝ և վնասում, մինչդեռ ՖՀՄՍ 9-ի համաձայն իրական արժեքի այդ փոփոխությունները հիմնականում ներկայացվում են հետևյալ կերպ. իրական արժեքի փոփոխության մնացած գումարը ներկայացվում է շահույթ և վնասում:

Ֆինանսական ակտիվների, վարկերի տրամադրման պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ի «կրած կորուստների» մոդելը՝ ապագայի վրա հիմնված «ակնկալվող պարտքային կորուստների» մոդելով: Նոր արժեզրկման մոդելի կիրառումը Ընկերությունից պահանջում է զգալի մասնագիտական դատողություններ, թե ինչպես են տնտեսական գործոնների փոփոխություններն ազդում հավանականությամբ կշռված ակնկալվող պարտքային կորուստների վրա: ՖՀՄՍ 9-ի համաձայն բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

ՖՀՄՍ 9-ի ուժի մեջ մտնելու հետ կապված Ընկերությունի ֆինանսական հաշվետվությունների վրաամենաէական ազդեցությունն ակնկալվում է, որ կլինի արժեզրկման նոր պահանջների հետևանքով: ՖՀՄՍ 9-ի նոր արժեզրկման մոդելի կիրառումը հանգեցնում է ֆինանսական գործիքների համար արժեզրկումից կորուստների ավելացմանը և փոփոխականությանը:

Եթե պարտքային գործիքները 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեն ցածր վարկային ռիսկ, ապա Ընկերությունը որոշում է, որ վարկային ռիսկը էական չի աճել սկզբնական ճանաչումից հետո:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

ՖՀՄՍ 15-ը հասույթի ճանաչման նոր պահանջներ է ներկայացնում՝ փոխարինելով ՀՀՄՍ 18-ը «Հասույթ», ՀՀՄՍ 11-ը «Կառուցման պայմանագրեր» և հասույթի հետ կապված որոշ այլ մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հասույթի ճանաչման մոդել՝ հիմնված վերահսկողության վրա և լրացուցիչ ուղեցույց է տրամադրում գործող ՖՀՄՍ-ներում մանրամասնորեն չներկայացված տարբեր ոլորտների վերաբերյալ, ներառյալ՝ ինչպես հաշվառել բազմակի պարտավորությունների կատարման, փոփոխուն գնագոյացման, հաճախորդներին փոխհատուցման իրավունքների, մատակարարների՝ հետգնման տարբերակների պայմաններ և այլ բարդություններ պարունակող պայմանագրերը:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Հիմնադրամի ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ում ներկայացված են վարձակալության հաշվառման նոր պահանջներ և փոփոխություններ: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, որ վարձակալները պետք է հաշվառեն վարձակալությունները «հաշվապահական հաշվեկշռում»՝ ճանաչելով «օգտագործման իրավունքը» որպես ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորությունը:

Մինչև ժամանակ ՖՀՄՍ 16-ը՝ փոփոխում է վարձակալության սահմանումը, սահմանում է ակտիվի և պարտավորության հաշվառման պահանջներ, այդ թվում՝ դրանց այնպիսի առանձնահատկությունների, ինչպիսիք են ոչ-վարձակալական տարրերը, փոփոխվող վարձակալական վճարները և արտոնյալ (օպցիոն) ժամանակաշրջանները, ազատման հնարավորություն է տալիս կարճաժամկետ վարձակալությունների և ցածրարժեք ակտիվների համար, փոփոխում է «վաճառք հետադարձ վարձակալությամբ» միայնավորվածությունների հաշվառումը, մեծապես պահպանում է ՀՀՄՍ 17-ի մոտեցումը՝ վարձատուների հաշվառման մասով, ներկայացնում է նոր բացահայտման պահանջներ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը՝ պայմանով, որ ՖՀՄՍ 15-ը «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ», նույնպես կիրառվի: Հիմնադրամի ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

2.6 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել: Հետևյալ չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամտի ճանաչումը:

Տոկոսային ծախսեր և եկամուտներ

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես <<տոկոսային եկամուտ>> և <<տոկոսային ծախս>>:

Եթե ֆինանսական ակտիվները կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Միջնորդավճարներից և այլ նմանատիպ վճարներից եկամուտներ ու ծախսեր

Միջնորդավճարները, վարձավճարները և այլ եկամտային ու ծախսային հոդվածները հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով, ծառայությունների մատուցման ընթացքում:

Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ առևտրային ակտիվների փոխարկումից զոյացող օգուտը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության <<այլ եկամուտ>> կամ <<այլ ծախս>> հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Ստորև ներկայացվում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Ընկերության կողմից օգտագործված տարեվերջյան փոխարժեքը.

Արտարժույթի տեսակ	ՀՀԿԲ-ի միջին հաշվարկային փոխարժեքը 31.12.2018թ-ի դրությամբ	ՀՀ ԿԲ-ի միջին հաշվարկային փոխարժեքը 31.12.2017թ-ի դրությամբ
1 ԱՄՆ դոլար	483.75 ՀՀ դրամ	484.10 ՀՀ դրամ

Հարկում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտներից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով:

ՀՀ-ում գործում են նաև այլ գործառնական հարկեր, որոնք հաշվարկվում են ելնելով Ընկերության գործունեությունից: Այս հարկերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են <<Այլ ծախսեր>> հոդվածում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը և հաշիվները Ընկերություններում, որոնք կարճ ժամանակահատվածում կարող են փոխարկվել կանխիկ դրամի:

Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է այլ բանկերում բացված ընթացիկ կամ տարբեր ժամկետներով ավանդային հաշիվները: Ֆիքսված ժամկետով ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը հաշվեկշռում ճանաչում է այն ժամանակ, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական առուվաճառքի դեպքում դրանք ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ: Սովորական ճանապարհով ձեռք բերված ֆինանսական գործիքները, որոնք հետագայում պետք է հաշվառվեն իրական արժեքով, գործարքի օրվա և պայմանագրի օրվա միջև ընկած ժամանակահատվածում հաշվառվում են նույն եղանակով, որով հաշվառվում են ձեռքբերված գործիքները:

Բիզնես մոդելի և դրամական միջոցների հոսքերի համար իրականացվող գնահատումների արդյունքում Ընկերությունը որոշում է ֆինանսական ակտիվի դասակարգումը: Ֆինանսական ակտիվների համար առկա են հետևյալ դասակարգումները՝

- Ամորտիզացված արժեք, չափվում են հավաքելու համար պահվող բիզնես մոդելում պահվող ակտիվները,
- Իրական արժեք՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, չափվում են հավաքելու և վաճառելու համար պահվող բիզնես մոդելում պահվող ակտիվները:
- Իրական արժեք՝ շահույթի կամ վնասի միջոցով, չափվում են այլ բիզնես մոդելում պահվող ակտիվները:

Ամորտիզացված արժեք

Սկզբնական դասակարգումը և չափումը

Ֆինանսական ակտիվները պետք է չափվեն ամորտիզացված արժեքով, եթե բավարարում են հետևյալ երկու պայմանները՝ դրանք դասակարգվում են հավաքելու համար պահվող բիզնես մոդելում, և դրանք առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Բաժնային գործիքներում ներդրումները, ինչպես նաև ածանցյալ գործիքները չեն բավարարում միայն "մայր գումարի և տոկոսների վճարումներ" գնահատման չափանիշներին, և հետևաբար դրանք չեն կարող դասակարգվել ամորտիզացված արժեքով հաշվառվող պորտֆելում:

Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստի գումարը: Տոկոսը հաշվարկվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Պահուստում ճանաչված սկզբնական գումարը, ինչպես նաև հետագա փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Իրական արժեք՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով

Սկզբնական դասակարգումը և չափումը

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, երբ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- ա) ակտիվը դասակարգվում է "հավաքելու և վաճառելու համար պահվող" բիզնես մոդելում,
- բ) այն առաջացնում է դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ինչ վերաբերում է բաժնային գործիքներին, դրանց սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է կատարել անշրջելի ընտրություն՝ կոնկրետ բաժնային գործիքները դասակարգել որպես իրական արժեքով հաշվառվող՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Այս որոշումը կատարվում է յուրաքանչյուր բաժնային գործիքի համար առանձին:

Հետագա չափումը

Պարտքային գործիքներ

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Ընկերությունը շահույթում կամ վնասում է ճանաչում արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսը, արժեզրկման պահուստի սկզբնական գումարն ու դրանց հետագա փոփոխությունները, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքի տարբերությունների հետ կապված օգուտներն ու վնասները:

Պարտքային գործիքների ապաճանաչման կամ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվ վերադասակարգման ամսաթվի դրությամբ պարտքային գործիքների արտարժույթի փոխարժեքի տարբերությունների հետ կապված կուտակային օգուտներն ու վնասները վերադասակարգվում են շահույթում կամ վնասում:

Բաժնային գործիքներ

Եթե Ընկերությունը կատարել է ընտրություն և սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգել է բաժնային գործիքում կատարված ներդրումը որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, ապա այդ բաժնային գործիքների իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Ի տարբերություն պարտքային գործիքների, որոնք նախորոշվել են որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, բաժնային գործիքների հետ կապված՝ Օգուտներն ու վնասները, որոնք ճանաչվել են

այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, հետագայում չեն փոխանցվում շահույթ կամ վնաս՝ չնայած այն բանի, որ կուտակային օգուտներն ու վնասները կարող են տեղափոխվել սեփական կապիտալի հոդվածների միջև (չբաշխված շահույթ), Բաժնային գործիքները ենթակա չեն արժեզրկման հաշվարկների:

Այն դեպքերում, երբ կազմակերպությունը կատարել է նման ընտրություն, շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Իրական արժեք՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք չեն բավարարում որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, դասակարգվելու չափանիշներին, չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը

Ընկերությունը վերադասակարգում է ֆինանսական ակտիվները, եթե կատարվել է այդ ֆինանսական ակտիվների կառավարմանն ուղղված բիզնես մոդելի փոփոխություն:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում առաջացնող բիզնես մոդելի փոփոխության դեպքում, վերադասակարգումը կատարվում է առաջընթաց՝ բիզնես մոդելի փոփոխությունից հետո առաջին հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆինանսական հաշվետվություններում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը դասակարգում է ֆինանսական պարտավորությունները որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը, բացառությամբ.

ֆինանսական պարտավորությունների՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Այդպիսի պարտավորությունները, ներառյալ պարտավորություն հանդիսացող ածանցյալ գործիքները, պետք է հետագայում չափվեն իրական արժեքով:

Բֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են,

- երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պայմաններին, մասնավորապես՝ եթե Ընկերությունը պահպանել է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և պետք է շարունակի փոխանցված ակտիվն ամբողջությամբ ճանաչել, իսկ ստացված հատուցման գծով պետք է ճանաչի ֆինանսական պարտավորությունը: Հետագա ժամանակաշրջաններում Ընկերությունը պետք է ճանաչի փոխանցված ակտիվից ստացված ցանկացած եկամուտ և ֆինանսական պարտավորության գծով կրած ցանկացած ծախս:
- կամ երբ կիրառվում է շարունակական ներգրավվածության մոտեցումը: Այս մոտեցումը կիրառվում է, եթե Ընկերությունը ակտիվը ճանաչում է իր շարունակվող ներգրավվածության չափով, և ճանաչում է նաև դրա հետ կապված պարտավորությունը: Փոխանցված ակտիվը և համապատասխան պարտավորությունը չափվում են այնպիսի հիմունքով, որն արտացոլում է Ընկերության կողմից պահպանած իրավունքներն ու պարտականությունները: Համապատասխան պարտավորությունը չափվում է այնպես, որ փոխանցված ակտիվի և համապատասխան պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը

ա) Ընկերության կողմից պահպանած իրավունքների և պարտականությունների ամորտիզացված արժեքն է, եթե փոխանցված ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, կամ

բ) հավասար է Ընկերության կողմից պահպանած իրավունքների և պարտականությունների իրական արժեքին՝ առանձին չափվելու դեպքում, եթե փոխանցված ակտիվը չափվում է իրական արժեքով:

Ապաճանաչում՝ Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը կամ նմանապատիվ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- լրացել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը
- Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանել է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ համաձայն փոխանցման համաձայնագրի, և
- Ընկերությունը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը և չի փոխանցել ու չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, ինչպես նաև չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը ճանաչվում է մինչև Ընկերության՝ ֆինանսական ակտիվում շարունակական մասնակցությունը: Փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև ստացած շարունակական մասնակցությունը որոշվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը կամ փոխհատուցման վճարվելիք գումարը, որ Ընկերությունից կարող է պահանջվել:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է այն ժամանակ, երբ այն մարվում կամ չեղյալ է համարվում, կամ լրանում է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է էականորեն տարբերվող պայմաններով, բայց մինևույն փոխառուին վերաբերող պարտավորությամբ, կամ էականորեն փոփոխվում են գոյություն ունեցող պարտավորության պայմանները, նման փոխանակումը կամ փոփոխությունը պետք է հանգեցնի սկզբնական պարտավորության ապաճանաչման և նոր պարտավորության ճանաչման, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վերանայված վարկեր

Որտեղ հնարավոր է, Ընկերությունը փորձում է վերանայել վարկերը, քան բռնագանձել գրավը: Սա կարող է հանգեցնել վճարումների երկարաձգումների և վարկի մարման նոր պայմանների մասին համաձայնության: Երբ վարկի պայմանները վերանայված են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Ղեկավարությունը շարունակաբար վերանայում է վերանայված պայմաններով վարկերը, համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են և որ ապագա վճարումները կկատարվեն: Վարկերը շարունակում են մնալ արժեզրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա օգտագործելով վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, այլ համապարփակ եկամուտներից վերաձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված կապիտալ գործիքների արժեզրկումից կորուստների հակադարձումը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի ճանաչվում, այլ հաշվառվում է կապիտալի առանձին բաժնում, որպես այլ համապարփակ եկամուտ: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներ են, որոնք առաջանում են, երբ Հնկերությունը անմիջապես միջոցներ է տրամադրում պարտապանին՝ առանց դեբիտորական պարտքը վաճառելու մտադրության:

Հետագայում վարկի հաշվեկշռային արժեքը որոշվում է օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաճախորդներին տրամադրված վարկերը հաշվառվում են ակնկալվող մարման ժամկետի վրա հիմնված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով հնարավոր կորուստների պահուստներով:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Հաշվեկշռային ամսաթվի դրությամբ Հնկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման աստիճանը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում է արժեզրկված, և արժեզրկման վնասը ճանաչվում է այն ժամանակ, երբ գոյություն ունի ակտիվի սկզբնական ճանաչմանը հաջորդող իրադարձությունների (<<ծախսային իրադարձությունների>>) արդյունքում առաջացած արժեզրկման օբյեկտիվ վկայություն, և այդ ծախսային իրադարձությունը (իրադարձությունները) ազդեցություն ունի ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի ապագա դրամական հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Արժեզրկման օբյեկտիվ վկայության որոշման համար օգտագործվող չափանիշներից են՝ պարտապանի կամ պարտապանների խմբի էական ֆինանսական դժվարությունների մասին վկայող ցուցանիշները (օրինակ՝ սեփական միջոցների գործակիցը, գուտ եկամուտ/վաճառք գործակիցը), տոկոսների և մայր գումարի վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ այլ պայմանների խախտումները, գրավի արժեքի նվազումը, սնանկացման կամ ֆինանսական այլ վերականգնման հավանականությունը, և երբ տեսանելի տվյալները վկայում են չափելի նվազման մասին ակնկալվող ապագա դրամական հոսքերում, ինչպիսիք են փոփոխությունները պարտավորություններում կամ տնտեսական պայմաններում, որոնց վերագրվում են թերացումները: Հնկերությունը նախ գնահատում է արժեզրկման օբյեկտիվ վկայության առկայությունը անհատական ֆինանսական ակտիվների համար, որոնք առանձնաբար նշանակալի են, և անհատական կամ խմբային ֆինանսական ակտիվների համար, որոնք առանձնաբար նշանակալի չեն: Եթե պարզվել է, որ գոյություն չունի արժեզրկման օբյեկտիվ վկայություն անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար՝ անկախ էականության աստիճանից, ապա ակտիվը ներառվում է նույնանման վարկային ռիսկ ունեցող ֆինանսական ակտիվների խմբի մեջ, և ֆինանսական ակտիվների այդ խումբը ենթարկվում է խմբային գնահատման: Այն ակտիվները, որոնք անհատականորեն են ենթարկվում արժեզրկման գնահատմանը, և որոնց գծով արժեզրկումը ճանաչվել է կամ շարունակում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման խմբային գնահատման մեջ:

Եթե գոյություն ունի ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վնասի օբյեկտիվ վկայություն, ապա վնասի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված այն ապագա դրամական հոսքերի իրական արժեքի միջև տարբերությունը (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի), որոնք գեղչվել են՝ օգտագործելով ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը (այսինքն, սկզբնական ճանաչման ժամանակ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքը): Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստի հաշվի միջոցով: Վնասի գումարը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարումը պահվող ներդրումը ունի փոփոխուն տոկոսադրույք, ապա արժեզրկման ցանկացած վնասի գեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Հնկերությունը կարող է չափել արժեզրկման վնասը գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Գրավով ապահովված ֆինանսական ակտիվի ակնկալվող ապագա դրամական հոսքերի ներկա արժեքը արտահայտում է գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը՝ հանած գրավի ձեռք բերման և վաճառքի հետ կապված ծախսերը, անկախ գրավի իրացման հավանականությունից:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Կազմակերպության վարկային դասակարգման ներքին համակարգի հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի այնպիսի բնորոշիչները, ինչպիսիք են ակտիվի տեսակը, արդյունաբերության ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետային կարգավիճակը և այլ նմանատիպ գործոններ:

Ակտիվների խմբերի ապագա դրամական հոսքերի փոփոխությունների գնահատումը պետք է արտահայտի և համապատասխանի տեսանկյնի կապակցված տվյալների փոփոխություններին (օրինակ՝ փոփոխություններ գործադրության դրույքներում, գույքի գներում, վճարման կարգավիճակում, կամ խմբում արժեզրկումը մասնաճյուղ այլ գործոններում կամ դրանց ծավալներում): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները անընդհատ վերանայվում են Կազմակերպության կողմից, որպեսզի նվազեցվի գնահատված և իրական վնասների միջև եղած տարբերությունները:

Վարկերը՝ կապակցված պահուստների հետ մեկտեղ, դուրս են գրվում, երբ գոյություն չունի ապագայում վարկի հավաքագրելու իրատեսական հեռանկար, և բոլոր գրավներն իրացվել են կամ փոխանցվել Կազմակերպությանը: Եթե հաջորդող տարում գնահատված արժեզրկման վնասի գումարը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչմանը հաջորդող իրադարձությունների արդյունքում, ապա նախկինում ճանաչված արժեզրկման վնասը ավելացվում կամ նվազեցվում է պահուստային հաշիվը ճշգրտելու միջոցով: Եթե ապագա դուրս գրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում Վարձակալություն

Գործառնական վարձակալություն՝ Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որոնց սեփականատյան հետ կապված ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատրի կողմից, դասակարգվում է որպես գործառնական: Գործառնական վարձակալությունից առաջացող վարձավճարները ծախս են ճանաչվում գծային մեթոդով վարձակալության ժամանակահատվածի ընթացքում և ներառվում են այլ գործառնական ծախսերում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Եթե հիմնական միջոցի փոխհատուցվող գումարը փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ժամանակավոր չհամարվող պայմանների արդյունքում, համապատասխան ակտիվը նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող արժեքը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով, որի հիմքում ընկած է ակտիվի օգտակար ծառայության ժամկետը: Կիրառվել են մաշվածության հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Դրույքաչափ(%)
Գույք և գրասենյակային սարքավորումներ	5	20
Համակարգիչներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20
Ոչ նյութական ակտիվներ	10	10

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում դրանք տեղի են ունեցել: Կապիտալ բնույթի վերանորոգման ծախսերը ներառվում են ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ առաջացած ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից կիսուսն ղեկավար Ընկերություն: Կապիտալ վերանորոգումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ընթացքում:

Հիմնական միջոցների օտարումից ծախսերը և եկամուտները որոշվում են՝ համեմատելով ակտիվի օտարումից գուտ մուտքերն ու հաշվեկշռային արժեքը և ներառվում են գործառնական եկամտի մեջ:

Վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է չբաշխված շահույթին՝ կազմակերպության կողմից ակտիվների օգտագործմանը գույրենթաց: Վերագրվող գումարի մեծությունը հավասար է ակտիվների վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվների սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության միջև եղած տարբերությանը:

Երբ վերագնահատված ակտիվները դուրս են գրվում կամ օտարվում են, օտարված ակտիվին վերագրելի և վերագնահատման պահուստում ներառված գումարները վերագրվում են չբաշխված շահույթին:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանակացած կուտակված արժեզրկման ծախս: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հատկանիշները: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, բայց տարին մեկ անգամ ստուգվում են արժեզրկման համար անհատական կամ դրամային միջոցներ ստեղծող միավորի մակարդակով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերանայվում է յուրաքանչյուր տարի պարզելու համար, թե արդյոք ակտիվի օգտակար ծառայության ժամկետը դեռևս անորոշ է գնահատվում: Համակարգչային ծրագրերի պահպանմանը վերագրելի ծախսերը ծախս են ճանաչվում առաջացման պահին:

Փոխառություններ

Փոխառությունները, որոնք ներառում են այլ ֆինանսական կազմակերպությունների, փոխատուների և հիմնադիր կողմի նկատմամբ պարտավորությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված գուտ մուտքերի իրական արժեքով՝ հանած անմիջապես վերագրելի գործառնական ծախսերը: Սկզբնական գնահատումից հետո փոխառություններն հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում այն ժամանակ, երբ ապաճանաչվում են պարտավորությունները, ինչպես նաև ամորտիզացիոն ընթացակարգի միջոցով:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Ընկերությունն անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել:

Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն և հաշվեկշռային ամսաթվի դրությամբ նվազեցվում են կապիտալից միայն այն դեպքում, եթե դրանք հայտարարվել են մինչև հաշվեկշռային ամսաթիվը կամ այդ ամսաթվին: Շահաբաժինները բացահայտվում են, երբ դրանք առաջարկվում են մինչև հաշվեկշռային ամսաթիվը, կամ առաջարկվում կամ հայտարարվում են հաշվեկշռային ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հաստատումը հրապարակման համար:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվանցվում են և գուտ գումարը արտացոլվում է հաշվեկշռում, եթե գոյություն ունի ճանաչված գումարների հաշվանցման օրենսդրորեն հաստատված իրավունք, և առկա է գուտ գումարների հիման վրա հաշվանցման կամ ակտիվի իրացման ու միաժամանակ պարտավորության մարման մտադրություն:

Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՆՄՄ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ծախսերի և եկամուտների վրա: Պատմական փորձի և տվյալ պայմաններում հիմնավորված այլ գործոնների վրա հիմնված գնահատումներն ու դրանց հիշատակված ենթադրությունները հնարավորություն են տալիս դատողություններ անել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք հնարավոր չէ որոշել այլ աղբյուրներից: Բոլոր դեպքերում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավատյան պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունը իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական գներով: Գործող շուկայի բացակայության դեպքում շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքների կիրառումը որոշվում է դատողությունների հիման վրա: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման պահուստներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Ընկերությունը վերանայում է իր խնդրահարույց վարկերն ու փոխատվությունները՝ որոշելու համար, թե արդյո՞ք արժեզրկման պահուստ պետք է նախատեսվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է որոշել պահանջվող պահուստի չափը: Նման գնահատումները հիմնված են մի շարք գործոնների վերաբերյալ ենթադրությունների վրա, և իրական արժեքները կարող են տարբերվել, որը կհանգեցնի պահուստի գումարի հետագա փոփոխությունների:

Առանձնաբար նշանակալի վարկերի և փոխատվությունների համար ստեղծված հատուկ պահուստից բացի, Ընկերությունը ստեղծում է նաև արժեզրկման խմբային պահուստներ այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են ցուցանիշների վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ, տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թուլությունները կամ դրամական հոսքերի նվազումը:

3. ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵՎ ՄԱՆԱՏԻՊ ԵԿՎԻՎԱԼԵՆՏԵՐ

հազար դրամ

	31.12.2018 թ.	31.12.2017 թ.
Տոկոսային եկամուտներ Բանկային հաշիվներից և ավանդներից	113	41
Տոկոսային եկամուտներ դրամական շուկայում ներդրումներից		
Տոկոսային եկամուտներ վարկերից և այլ փոխառություններից	196,968	157 378
Տոկոսային եկամուտներ մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերից	630	722
Այլ տոկոսային եկամուտներ	354	-
Ընդամենը	198,065	158 141

4. ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵՎ ՄԱՆԱՏԻՊ ԾԱԽՍԵՐ

հազար դրամ

	31.12.2018թ.	31.12.2017թ.
Տոկոսային ծախսեր Ընկերություններից ստացված վարկերի դիմաց	-	-
Տոկոսային ծախսեր՝ ռեպո համաձայնագրերի դիմաց	-	-
Տոկոսային ծախսեր այլ ֆինանսական կամակերպություններից	(1,689)	(16,987)
Տոկոսային ծախսեր ֆիզ. անձանցից ստացված փոխառությունների դիմաց	(157,101)	(92,147)
Այլ տոկոսային ծախսեր	-	-
Ընդամենը	(158,790)	(109,134)

5. ԿՈՄԻՍԻՈՆ և ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍՔՈՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազար դրամ

	31.12.2018 թ.	31.12.2017 թ.
Այլ միջնորդավճարներ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպություններից	4,995	6,900
Այլ միջնորդավճարներ ֆիզիկական անձանցից	185,585	172,711
Այլ միջնորդավճարներ ապահովագրական ընկերություններից	61	54
Ընդամենը	190,641	179,665

6. ԿՈՄԻՍԻՈՆ և ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍՔՈՎ ԾԱԽՍԵՐ

հազար դրամ

	31.12.2018 թ.	31.12.2017 թ.
Միջնորդավճարներ		
Տույժեր ու տուգանքներ		
Ծախսեր արժեթղթերի փաթեթի կառավարման դիմաց		
Այլ միջնորդավճարներ ապահովագրական ընկերություններից		
Ընդամենը		

7. ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՑ ԵԱՀՈՒՅԹ

հազար դրամ

	31.12.2018 թ.	31.12.2017 թ.
Արտարժույթի արք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ/ծախս		
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ/ծախս		
Ընդամենը		

8. ԱՎՏԻՎՆԵՐԻ ՀԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻՑ ԶՈՒՑ ԵԱՀՈՒՅԹ/ՎՆԱՍ

հազար դրամ

	31.12.2018թ.	31.12.2017թ.
Վարկերի գծով կորուստների վերականգնումից եկամուտներ	191,806	90,789
Հատկացումներ տրամադրված վարկերի գծով հնարավոր կորուստների պահուստներին	(267,000)	(136,850)
ՖՀՄՍ 9-ի կիրառման հետ կապված արժեզրկման պահուստի ձգքըտում	(10,850)	
Ընդամենը	(86,044)	(46,061)

9. ԱՅԼ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազար դրամ

	31.12.2018թ.	31.12.2017թ.
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	9,200	9,558
Ընդամենը	9,200	9,558

10. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱՌՄԵՐ

հազար դրամ

	31.12.2018թ.	31.12.2017թ.
Աշխատակազմի գծով ծախսեր	(100,047)	(89,264)
Աուդիտի և այլ ինքնուրույնական գծով ծախսեր	(850)	(550)
Հիմնական միջոցների վարձակալության, սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(25,408)	(20,233)
Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր	(11,320)	(10,542)
Գովազդի ծախսեր	(3,964)	(4,493)
Մաշվածության գծով ծախսեր	(3,363)	(4,144)
Կազմակերպչական ծախսեր	(16,113)	(13,433)
Ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով ծախսեր	(669)	(421)
Այլ վարչական ծախսեր	(10,036)	(8,364)
Ընդամենը	(171,770)	(151,444)

11. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԵՋՈՑՆԵՐ

հազար դրամ

	31.12.2018թ.	31.12.2017թ.
Դրամարկդ		
Կանխիկ դրամ դրամապահոցում	15, 436	9,263
Հաշվարկային հաշիվ		
“ԱՇԻԲ” ՓԲԸ	1,622	9,488
“ԱՄԵՐԻԱ Ընկերություն” ՓԲԸ	812	531
Մասհանում պահուստին	(34)	(110)
Ընդամենը	17,836	19,172

12. ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ և ԱՅԼ ՓՈՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հազար դրամ

	31.12.2018թ.	31.12.2017թ.
Ֆինանսական անձանց տրամադրված վարկեր և այլ փոխառություններ	920,762	918,336
Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ	(51,584)	(45,019)
Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ համաձայն ՖՀՄՄ-9-ի	(38,561)	
Ընդամենը	830,617	873,317

13. ՄԻՆՁԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՊԱՀՎՈՂ ՆԵՐՇՈՐԻՄԵՐ

հազար դրամ

	31.12.2018թ.	31.12.2017թ.
Պետական տոկոսային արժեթղթեր	-	-
Ընդամենը	-	-

Շահագործման մեջ գտնվող ակտիվներ	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Համակարգիչներ	Այլ հիմնական միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Մնացորդն առ 31.12.2016թ.	7,138	7,142	10,801	4,698	29,779
Ավելացում	2,011	1,656	232		3,899
Օտարում, դուրսգրումներ					
Մնացորդն առ 31.12.2017.	9,149	8,798	11,033	4,698	33,678
Ավելացում	1,949	964		350	3,263
Օտարում, դուրսգրումներ	18	133	66		217
Մնացորդն առ 31.12.2018.	11,080	9,629	10,967	5,048	36,724
Մաշվածք					
Վերջնական մնացորդն առ 31.12.2016թ.	2,578	3,334	7,090	1,762	14,764
Տարվա մաշվածություն	1,525	1,184	2,048	470	5,227
Կուտակված արժեզրկում/դուրսգրումներ					
Վերջնական մնացորդն առ 31.12.2017թ.	4,103	4,518	9,138	2,232	19,991
Տարվա մաշվածություն	1,626	1,184	880	504	4,194
Կուտակված արժեզրկում/դուրսգրումներ	18	133	66		217
Վերջնական մնացորդն առ 31.12.2018թ.	5,711	5,569	9,952	2,736	23,968
Զուտ հաշվեկշռային արժեք					
Առ 31.12.2017թ.	5,046	4,280	1,895	2,466	13,687
Առ 31.12.2018թ.	5,369	4,060	1,015	2,312	12,756

15. ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐ

	հազար դրամ	
	31.12.2018թ.	31.12.2017թ.
Պետական տոկոսային արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ	664	604
Ֆիզիկական անձանց տրված վարկերի և փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ	13,347	9,527
Ընդամենը	14,011	10,131

16. ԱՅԼ ԱՎՏԻՎՆԵՐ

	հազար դրամ	
	31.12.2018թ.	31.12.2017թ.
Կանխավճարներ մատակարարներին	150	2,930
Դերիտորական պարտքեր այլ անձանց	331	752
Կանխավճարված աշխատավարձ	192	136
Փոխառության տոկոսների կանխավճարներ	35,606	28,512
Կանխավճարներ շահութահարկի գծով	-	-
Այլ կանխավճարներ	236	305
Հնարավոր կորուստների պահուստ	(448)	(486)
Ընդամենը	36,067	32,149

17. ՌԵՊՈ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

	հազար դրամ	
	31.12.2018թ.	31.12.2017թ.
Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	40,000	14,500
Ռեպո համաձայնագրեր Ընկերությունների հետ	-	-

18. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԿԱՏԱՍԲԸ

	հազար դրամ	
	31.12.2018թ.	31.12.2017թ.
Կրեդիտորական պարտքեր եկամտային հարկի գծով	8,183	-
Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով	-	2,015
Կրեդիտորական պարտքեր բոչ ռեզիդենտի շահութահարկի գծով	-	-
Կրեդիտորական պարտքեր կուտակային կենսաթոշակի գծով	27	52
Ընդամենը	8,210	2,067

19. ՆԵՐԳՐԱՎՎԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	31.12.2018թ.	31.12.2017թ.
Մասնակից հանդիսացող կազմակերպությունից ստացված ժամկետային փոխառություններ	-	-
Մասնակից հանդիսացող ֆիզիկական անձանցից ստացված ժամկետային փոխառություններ	654,000	639,000
Ընդամենը	654,000	639,000

20. ՎՃԱՐՎԵԼԻՔ ՏՈԿՈՍՆԵՐ

	31.12.2018թ.	31.12.2017թ.
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի դիմաց հաշվեգրված տոկոսներ	106	52
Մասնակից հանդիսացող ֆիզիկական անձանցից ստացված ժամկետային փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ	35,606	34,383
Ռեպո համաձայնագրերի դիմաց հաշվեգրված տոկոսներ	-	-
Ընդամենը	35,712	34,435

21. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱԳԱՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՇԵՏ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են՝

Գործարքներ	31.12.2018թ. հազար դրամ	31.12.2017թ. հազար դրամ
Ստացված փոխառություններ		
Մասնակից հանդիսացող կազմակերպությունից		(179,500)
Մասնակից հանդիսացող ֆիզիկական անձանցից	15,000	440,500
Ընդամենը	15,000	261,000

Մնացորդներ	31.12.2018թ. հազար դրամ	31.12.2017թ. հազար դրամ
Մասնակից հանդիսացող կազմակերպությունից ստացված ժամկետային փոխառություններ	-	-
Մասնակից հանդիսացող ֆիզիկական անձանցից ստացված ժամկետային փոխառություններ	654,000	639,000
Ընդամենը	654,000	639,000

Կապակցված կողմերին վճարվելիք տոկոսներ	31.12.2018թ. հազար դրամ	31.12.2017թ. հազար դրամ
Մասնակից հանդիսացող կազմակերպություններից ստացված ժամկետային փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ	-	-
Մասնակից հանդիսացող ֆիզիկական անձանցից ստացված ժամկետային փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ	39,562	34,383
Ընդամենը	39,562	34,383

21. ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	31.12.2018թ. հազար դրամ	31.12.2017թ. հազար դրամ
Արտաքին կրեդիտորական պարտքեր	6,328	5,342
Պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձ	-	-
Այլ կրեդիտորական պարտքեր	397	467
Ընդամենը	6,725	5,809

22. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱԴԵՍԱԼ

31.12.18թ-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում էր 244,020,000 (Երկու հարյուր քառասունչորս միլիոն քսան հազար) հայկական դրամ, որը ներառում է տեղաբաշխված 300,000(երեք հարյուր հազար) հատ սովորական (հասարակ) բաժնետոմս յուրաքանչյուրը 813,40(ութ հարյուր տասներեքդրամ 40 լումա) ՀՀ դրամ անվանական արժեքով:

23. ԱԿՏԻՎՆԵՐԻ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետի մասին ծանոթագրությունը կազմված է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև մարման ամսաթիվը մնացած ժամանակաշրջանի մեթոդով:

Ակտիվներ	Հազար դրամ					Ընդամենը
	1ամսից պակաս	1-ից 3 ամիս	3ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	
Դրամական միջոցներ և Ընկերությունային հաշիվներ	15 436					
Տրամադրված վարկեր		66 422	175 200	334 000	344 810	920 432
Ընդամենը	15 436	66 422	175 200	334 000	344 810	935 868

Պարտավորություններ	1ամսից պակաս	1-ից 3 ամիս	3ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ներգրավված փոխառություններն ավարվելիք տոկոսներ					654 000	654 000
Այլ պարտավորություններ				50 979		50 979
Ընդամենը				50 979	654 000	704 979

24. ԱՐՏԱՐԺՈՒԹՅԱՅԻՆ ԶԱՄՔՅՈՒՂ

Ընկերությունը հաշվետու տարում ԱՄՆ դոլարով արտահայտված պարտավորություններ չունի

25. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ և ՊՈՏԵՆՑԻԱԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<<Կրեդո ֆինանս>> ՈւՎԿ ՓԲԸ-ն արտահայտվել է իր հաշվառված պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ չունի:

26. ԱԿՏԻՎՆԵՐԻ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԱՐՏԱՀԱՇՎԵԿԵԾՈՒՄՆԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

Տեղաբաշխված վարկերի, ավանդների տնտեսության ճյուղերի	գծով ստացվելիք գումարներն ըստ	2018թ.	2017թ.
սպառողական վարկեր		920,432	918,336

Տեղաբաշխված վարկերի գծով ստացվելիք գումարները Երևանում և ըստ ՀՀ մարզերի	31.12.2018թ.	31.12.2017թ.
ա) Երևան	913 894	908 935
բ) Վայոց ձոր	974	3,650
գ) Արմավիր	876	0
դ) Շիրակ	2,105	367
ե) Սյունիք	287	5,384
զ) Լոռի	2,296	
Ընդամենը	920,432	918,336

27. ԳՐԱՎԱԳՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ

Ընկերությունը գրավադրված ակտիվներ չունի:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Բելլա Գաբրիելյան

Վարդանուշ Մինասյան